***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-16/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ԿԱՐԾԻՔ***

***(ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ)***

Հանդիսանալով «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/18-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ՝ «Դեմ» եմ քվեարկել հայտերի բացման նիստի արձանագրության 2-րդ կետի վերաբերյալ, որի շուրջ ունեմ այլ՝ հատուկ կարծիք, մասնավորապես. ըստ ընթացակարգին մասնակից «Թրեյդիմպեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների՝ վերջինս մրցույթին մասնակցում է «Մեգիել» ՍՊԸ-ի հետ՝ համատեղ գործունեության (կոնսորցիումի) միջոցով և ներկայացրել է համապատասխան պայմանագիր, ինչպես նաև տվյալ պայմանագրից բխող յուրաքանչյուր մասնակցի՝ իր մասով առաջարկվող որակավորման չափանիշների առկայությունը հավաստող փաստաթղթերը:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանվում է, որ «մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի ***սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին»*** , իսկ Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է.

***1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝***

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. հայտի ապահովում,

ե. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

է. ապրանքների գնման դեպքում, եթե առաջարկվում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք, ապա իր կողմից հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ:

Այսինքն, Կարգի մեկնաբանությունից ստացվում է, որ կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ պետք է բավարարի 35-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին:

Իսկ մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրությունից պարզվում է, որ մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացնելու է միայն այն փաստաթղթերը, որոնք ներկայացնելու պարտավորությունը ստանձնել է համատեղ գործունեության պայմանագրով:

Ելնելով վերոնշվածից՝ կարծում եմ, որ «Թրեյդիմպեքս» ՍՊԸ-ի հայտը կարող է գնահատվել բավարար միայն այն դեպքում, երբ կոնսորցիումի բոլոր անդամների հայտով ներկայացված փաստաթղթերը կհամապատասխանեն Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին:

ՀՀ ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ

ԳՆԴԱՊԵՏ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ